



# ՈՍԿԵԾԱՂԻԿԸ

Շաղիկ փոքրիկ աղջիկ մըն էր, որուն հայրը մահացած էր ու ինք իր մօրը հետ կ'ապրէր խրճիթի մը մէջ: Մայրը ստիպուած էր ամէն օր երկա՛ր ժամեր աշխատիլ՝ իրենց առօրեայ ապրուստը ապահովելու: Սակայն օր մըն ալ ան ծանրօրէն կը հիւանդանայ եւ Շաղիկէն կը խնդրէ, որ բժիշկ մը կանչէ տուն:

Շաղիկ մտահոգուած տունէն դուրս կ'ելլէ՝ բժիշկին լուր տալու: Ճամբան ծերունիի մը կը հանդիպի, որ փոքրիկ աղջկան տակնուվրայ վիճակը տեսնելով կը հարցնէ թէ ո՛ր կ'երթայ այդպէս մտահոգ:

Շաղիկ կը պատասխանէ, թէ մայրիկը հիւանդ է եւ ինք կը փութայ բժիշկը կանչելու:

Ծերունին կը յայտնէ, թէ ինք բժիշկ մըն է եւ կ'առաջարկէ օգտակար դառնալ:



Շաղիկ կը համոզուի եւ ծերունին իրենց տունը կ'առաջնորդէ: Ծերունին փոքրիկին մայրը քննելէ ետք, կը յայտնէ թէ անոր վիճակը մտահոգիչ է եւ վտանգաւոր, ուստի կը խնդրէ Շաղիկէն, երթալ իրենց տան մօտ գտնուող Բանիանէնիին (ծառի տեսակ) տակ ծաղկած Ոսկեծաղիկը քաղել եւ տուն բերել:

Դուրսը ցուրտ էր: Շաղիկ բարակ հագուստ մը հագած կը վազէ դէպի այդ ծառը, ոտքերը գրեթէ չէին զգար: Բաւական յոգնելէ եւ փնտռելէ ետք կը գտնէ զայն: Կը մօտենայ ու անոր տակ կը տեսնէ Ոսկեծաղիկը, որ ծերունին իրմէ խնդրած էր ու անմիջապէս կը քաղէ զայն: Նոյն վայրկեանին Շաղիկին ականջին ծերունիին ձայնը կը լսուի, որ կ'ըսէ.

- Ոսկեծաղիկէն իւրաքանչիւր թերթիկ մայրիկիդ կեանքէն մէկ օր կը ներկայացնէ:

Շաղիկ Ոսկեծաղիկը իր ձեռքերուն մէջ կ'առնէ, կը սկսի թերթիկները հաշուել, մէկ, երկու, երեք, ..... քսան: Ան շատ կը տխրի, բայց արագօրէն միտք մը կը յղանայ: Կը սկսի իւրաքանչիւր թերթիկ բազմաթիւ մասերու բաժնել եւ վերստին ծաղիկը կազմել, այդպիսով՝ կը կազմէ տարօրինակ ու գեղեցիկ Ոսկեծաղիկ մը:

Երբ Շաղիկ տուն կը վերադառնայ, զարմանքը մեծ կ'ըլլայ, տեսնելով որ ծերունին զինք կը դիմաւորէ տան դիմաց ու կ'ըսէ.

- Շաղի՛կ, քու բարի սրտիդ համար մայրդ արդէն առողջացաւ:

Շաղիկ շատ կ'ուրախանայ եւ Ոսկեծաղիկը իր մօր կը նուիրէ:

Այդ օրուընէ սկսեալ, Ոսկեծաղիկը ամէն տարի, աշնան կը ծաղկի՝ խորհրդանշելով բարութիւն եւ անմեղութիւն:


ԹԻՒՆ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇԽԵՆԻ-ՇԱՀԻՆԻ,  
ՆԿԱՐԱՍԱՐՈՒՅՑ՝ ՈՍԿԻ ԲԵՐՈՇԵՆՆ



Գունաւորէ՛ հետեւեալ պատկերը:

<input type="checkbox"/> + 3 = 10		<input type="checkbox"/> + 1 = 2
<input type="checkbox"/> + 2 = 6		<input type="checkbox"/> + 2 = 7
<input type="checkbox"/> + 5 = 8		<input type="checkbox"/> + 4 = 5
<input type="checkbox"/> + 4 = 5		<input type="checkbox"/> + 3 = 9
<input type="checkbox"/> + 2 = 7		<input type="checkbox"/> + 2 = 4
<input type="checkbox"/> + 3 = 4		<input type="checkbox"/> + 4 = 8
<input type="checkbox"/> + 4 = 9		<input type="checkbox"/> + 5 = 6
<input type="checkbox"/> + 1 = 3		<input type="checkbox"/> + 2 = 10

Ամբողջացո՛ւր քառակուսիները, ճիշդ թիւերը տեղադրելով:



Իւրաքանչիւր պատկեր միացո՛ւր համապատասխան շուքին:



Կրնա՞ս 10 տարբերութիւններ գտնել երկու պատկերներուն միջեւ:



# ՀՐԱՇԱԳՈՐԾ ԲԱԿԼԱՆ

Չարեհ հաճելի կեանք մը կ'ապրեր. ան հարուստ չէր, բայց գոհ էր իր վիճակէն: Սակայն օր մը հայրը մահացաւ, եւ իրեն ու իր մօր՝ կովէ մը զատ բան չձգեց: Կովը այնքան ծեր էր, որ կաթ անգամ չէր տար:

Մայրը ըսաւ Չարեհին.

- Որդի՛ս, այս կովը շուկայ տա՛ր եւ ծախէ՛: Նայինք յետոյ ի՞նչ կ'ըլլայ:

Չարեհ ճամբան բարի դէմքով մարդու մը հանդիպեցաւ:

Մարդը ըսաւ.

- Ո՞վ քեզմէ կը գնէ այս տեսակ կով մը: Նոյնիսկ քանի մը դահեկան չեն տար ասոր համար:

Յետոյ բարի դէմքով մարդը աւելցուց.

- Սակայն ես կ'ուզեմ քեզի օգտակար ըլլալ: Դուն անմեղ դէմք մը ունիս: Կովը ինծի տո՛ւր, անոր փոխարէն ա՛ն այս տոպրակով բակլան: Վստահ եղի՛ր, որ չես զոջար:

Երբ Չարեհ տուն դարձաւ ձեռքին տոպրակ մը բակլան, մայրը սաստիկ բարկացաւ.

- Ի՞նչ, այդ խոշոր կովուն փոխարէն միայն բակլա՞յ մը: Ի՛նչ անխելք ես: Հիմա գնա՛, անօթի քնացի՛ր, որ խելքդ գլուխդ գայ:


Այս ըսելէն ետք, մայրը տոպրակ մը բակլան պատուհանէն դուրս նետեց: Չարեհ արդէն շատ յոգնած էր: Անօթի անկողին մտաւ եւ անմիջապէս քնացաւ:

Թռչունները քնացան ինչպէս նաեւ՝ բոլոր մարդիկը: Միայն կախարդուած բակլաները սկսան աճիլ ու մեծնալ Չարեհէնց պատուհանին տակ:

Չարեհ երազին մէջ բարի դէմքով մարդը տեսաւ, որ իրեն կ'ըսէր.

- Տո՛ւր կովը, ա՛ն բակլան, վստահ եղի՛ր, որ չես զոջար...

Առաւօտուն Չարեհ արթնցաւ եւ տեսաւ ծառի հսկայ բուն մը, որ կ'անհետանար ամպերուն մէջ: Գիտցաւ, որ բարի դէմքով մարդը չէր ստած: Սկսաւ մագլցիլ: Այնքան բարձրացաւ, որ այլեւս իրենց տնակը չէր տեսնուեր:



Երբ ամպերուն մօտ հասաւ, գեղեցիկ կին մը տեսաւ, որ իրեն ըսաւ.

- Ես Սիլվա պարիկն եմ: Բարի՛ եկար մօտս: Քեզ երկար ժամանակէ ի վեր կը սպասեմ: Այդ հսկան որ կը տեսնես, կ'ապրի այդ դղեակին մէջ, ունի հաւ մը, որ ոսկի հաւկիթ կ'ածէ ու անոնք բոլորովին իրեն կը պահէ եւ ուրիշներուն օգտակար չի դառնար: Ուրեմն ա՛ն այս տոպրակը, հաւը մէջը դի՛ր եւ վերադարձի՛ր մօրդ քով:

Այս խօսքերէն ետք, Սիլվա պարիկը անհետացաւ: Հսկային դղեակը մեծ ու հեռու էր: Վերջապէս Չարեհ հասաւ անոր, տեսաւ բաց պատուհան մը, որմէ ներս ցատկէց եւ պահուրտեցաւ դրան ետեւ: Սիւնին ետեւէն տեսաւ, որ հսկան հաւուն դիմաց նստեր է եւ զայն ազահուրթամբ կը դիտէ:

Հաւը տասներկու անգամ կտկտաց եւ տասներկու ոսկի հաւկիթ ածեց: Հսկան ուրախութեամբ ոտքի ելաւ, գնաց գինի խմեց եւ քնացաւ: Խռմփոցը դղեակը լցցուց: Չարեհ անմիջապէս մօտեցաւ հաւուն, թելին տակ դրաւ եւ փախաւ: Հաւը կրկին կտկտաց: Հսկան երբ լսեց հաւուն կտկտոցը, արթնցաւ: Տեսաւ Չարեհը, որ հաւը կը փախցնէր: Ձեռքը պատուհանէն երկարեց, որ զայն բռնէ: Սակայն շուտով բակլային ճիւղերուն փաթթուեցաւ: Հսկային ձեռքը բակլայի ճիւղերուն չհասաւ: Չարեհ բակլայի ճիւղերէն վար սահեցաւ, մինչեւ իրենց տունը: Կացին մը առաւ եւ բակլային մեծ ցօղունը կտրեց, որ հսկան ալ վար չկարենայ իջնել:

Հսկան, որ բակլային ճիւղերուն վրայ էր, ինկաւ գետին:

Սիլվա պարիկը շատ ուրախացաւ, որ հսկան այլեւս տերը պիտի չըլլայ ոսկի հաւկիթ ածող հաւուն:

Չարեհին մայրն ալ անշուշտ շատ ուրախացաւ: Շալկէց Չարեհը, ոսկի հաւկիթ ածող հաւը դրաւ առջելը եւ որոշեց.

- Այս ոսկիէն պիտի առնենք այնքան՝ որքան մեզի պէտք է: Մնացածը պիտի բաժնենք աղքատներուն:

Այս որոշումը մայր ու որդի գործադրեցին եւ անոր համար ալ երկար ու երջանիկ ապրեցան:





ԻՆՉ Է ԿԼԻՄԱՅԻ  
ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ  
ԻՆՉՊԵՍ Կ'ԱՉԴԷ  
ՈՎԿԻԱՆՈՍՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ

1800-ական թուականներն ի վեր մենք արհեստագիտության մեջ շատ փոփոխություններ ունեցած ենք: Օրինակ՝ մարդիկ յաճախ մեծ քանակներով քարիւղային նիւթեր կ'այրեն, որոնք հիմնականօրէն կ'արտադրեն նաֆթ, կազ եւ ածուխ՝ ինքնաշարժները սնուցելու,

տուները տաքցնելու եւ էլեկտրականութիւն ստեղծելու համար: Այս բոլորին պատճառով, մեր երկրագունդին մթնոլորտը կ'ապականի: Ջերոցային կազերուն գոյութիւնն ու անոնց օրէ օր բազմացումը կը նշանակէ, որ մեզ շրջապատող մթնոլորտը՝ որ կը նմանի վերմակի մը, կը դառնայ աւելի հաստ, դարձնելով Երկիր մոլորակը աւելի տաք:

Եկե՛ք մեր մոլորակը մարդու մարմինին նմանցնենք. երբ մեր մարմինն ջերմաստիճանը բարձրանայ, մենք արդէն անհանգիստ կը զգանք, երբեմն՝ տաք, իսկ երբեմն՝ սառ ու դող: Նոյն պարագան է նաեւ մոլորակին համար: Նոյնիսկ մէկ կամ երկու աստիճանի բարձրութիւնը մեծ տարբերութիւն կը պատճառէ, ինչպէս՝ անձրեւներուն քանակին կամ ովկիանոսներուն ջերմաստիճանին փոփոխութիւնը, կլիման հաւասարակշռութենէ դուրս կը բերեն:

Կլիմային փոփոխութիւնը կամ ջերմաստիճանին բարձրացումը, բեւեռներուն սառերը հալեցնելով, կրնան ծովուն մակարդակը բարձրացնել եւ ջրհեղեղներու պատճառ դառնալ: